## Ես տուբերկուլյոզի դեմ պատվաստանյութ (ԲՑԺ (BCG)) ստացել եմ իմ հայրենի երկրում:

## Կարո՞ղ եմ այնուամենայնիվ տուբերկուլյոզ ձեռք բերել:

Մարդիկ, ովքեր ստացել են տուբերկուլյոզի (TB) դեմ պատվաստանյութ, դարձյալ կարող են ձեռք բերել տուբերկուլյոզ:

Տուբերկուլյոզի դեմ պատվաստանյութի առաջացրած պաշտպանությունը **ժամանակի ընթացքում անհետանում է:**

Նույնիսկ եթե Դուք պատվաստվել եք, արյան թեստի դրական պատասխանը նշանակում է, որ Դուք ունեք գաղտնի տուբերկուլյոզային վարակ (LTBI):

**Գաղտնի տուբերկուլյոզային վարակի (LTBI) դեմ դեղեր** ընդունելը **Ձեզ կպաշտպանի ակտիվ տուբերկուլյոզից (TB):**

## Արդո՞ք գաղտնի տուբերկուլյոզային վարկ (LTBI) ունենալը կհետաձգի իմ ներգաղթի դիմումը:

**Գաղտնի տուբերկուլյոզային վարակի (LTBI) դեմ դեղեր ընդունելը ՉԻ դանդաղեցնի Ձեր ներգաղթի դիմումը:**

Ձեր ներգաղթի բժիշկը Ձեր տեղական առողջապահության բաժնին կտեղեկացնի, որ Դուք ունեք գաղտնի տուբերկուլյոզային վարակ (LTBI):

Տեղական առողջապահության բաժինը կարող է Ձեզ հետ կապ հաստատել **աջակցություն ցույց տալու համար:**

COUNTY OF LOS ANGELES
**Public Health**
Tuberculosis Control Program

# Ի՞նչ է նշանակում ինձ համար գաղտնի տուբերկուլյոզային վարակ (LTBI) ունենալը:

**Դուք կարող եք բուժել գաղտնի տուբերկուլյոզային վարակը (LTBI) և թույլ չտալ, որ Դուք և Ձեր սիրելիները հիվանդանաք:**

TB free CALIFORNIA

CTCA CALIFORNIA TUBERCULOSIS CONTROLLERS ASSOCIATION

CDPH California Department of PublicHealth

## Ի՞նչ է գաղտնի տուբերկուլյոզային վարակը (LTBI): Ինչպե՞ս եմ ես այն ձեռք բերել:

Գաղտնի տուբերկուլյոզային վարակը վարակվելն է տուբերկուլյոզի մանրէներով, որոնք թաքնված (կամ քնած) են Ձեր մարմնում:

Դուք ձեռք եք բերել գաղտնի տուբերկուլյոզային վարակ՝ **միևնույն օդը շնչելով** մեկի հետ, ով հիվանդ է եղել տուբերկուլյոզով:

**Դուք կարող եք ձեռք բերել գաղտնի տուբերկուլյոզային վարակ, նույնիսկ եթե պատվաստվել եք տուբերկուլյոզի դեմ (BCG):**

**Գաղտնի տուբերկուլյոզային (TB) վարակի և ակտիվ տուբերկուլյոզի (TB) միջև կան բազմաթիվ տարբերություններ:**

| **Գաղտնի TB վարակ** ունեցող անձ՝ | **Ակտիվ TB** ունեցող անձ՝ |
|---|---|
| Հիվանդ չի զգում | Կարող է հիվանդ զգալ |
| Ունի կրծքի նորմալ X-ray | Կարող է ունենալ կրծքի ոչ նորմալ X-ray |
| **Չի կարող փոխանցել** տուբերկուլյոզի մանրէները ուրիշներին | **Կարող է փոխանցել** տուբերկուլյոզի մանրէները ուրիշներին |
| Բուժումը կարող է կանխել ակտիվ տուբերկուլյոզը | Բուժումը կարող է վերացնել ակտիվ տուբերկուլյոզը |
| **Բուժումն ավելի կարճ է (3-4 ամիս)** | **Բուժումն ավելի երկար է (6-12 ամիս կամ ավելի)** |

## Ինչո՞ւ ես պետք է ընունեմ գաղտնի տուբերկուլյոզային վարակի (LTBI) դեղեր:

**Եթե Դուք չեք ընդունում դեղեր գաղտնի տուբերկուլյոզային վարակի դեմ, այն կարող է դառնալ ակտիվ տուբերկուլյոզ:**




Ակտիվ տուբերկուլյոզը **լուրջ հիվանդություն է**, որը կարող է Ձեզ դարձնել ծանր հիվանդ:

**Հոսպիտալացվում է** ակտիվ տուբերկուլյոզ ունեցող մարդկանց

**Կեսը**

**5 տարվա ընթացքում մահանում է** ակտիվ տուբերկուլյոզ ունեցող մարդկանցից

**6-ից 1-ը**

## Որտեղի՞ց կարող եմ ձեռք բերել տուբերկուլյոզային վարակի (LTBI) դեղեր:

**Հարցրեք ներգաղթի բժշկին՝** արդյո՞ք կարող են դեղը պատվիրել Ձեզ համար:

Եթե նրանք չեն կարող, **գնացեք Ձեր հիմնական բժշկի մոտ և խնդրեք նրան Ձեզ համար պատվիրել դեղը** (Ձեզ հետ բերեք Ձեր արյան թեստի փաստաթղթերը):

Դուք կարող եք նաև կապ հաստատել Ձեր տեղական առողջապահության բաժնի հետ, որպեսզի Ձեզ ուղղորդեն որևէ կլինիկա՝ բուժվելու:

**Եթե Դուք չեք ընդունում դեղը, ապա հավանականությունը 10-ից 1 է,** որ Ձեր գաղտնի տուբերկուլյոզային վարակը կդառնա ակտիվ տուբերկուլյոզ:

**Պաշտպանեք Ձեզ ակտիվ տուբերկուլյոզ ձեռք բերելուց և այն Ձեր սիրելիներին փոխանցելուց:**

(Armenian)